# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
# ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող.1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆիննախ.հայ
Էլ.փոստ՝ secretariat@minfin.am

N ____________________

<<________>> ________________ 20 թ.

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր՝ 2020թ. հունվարի 14-ի թիվ 344-35 հարցման՝ հայտնում ենք, որ 2018 թվականին ՀՀ ֆինանսների նախարարությունը ստացել է 173 հարցում, որից 79-ը՝ էլեկտրոնային եղանակով, իսկ 2019 թվականին՝ 288 հարցում, որից 277-ը՝ էլեկտրոնային եղանակով:

Հայտնում ենք, որ 2018 թվականի ընթացքում պաշտոնապես գրանցվել է 43 լրագրողի հարցում, իսկ 2019 թվականի ընթացքում՝ 56 հարցում, որից 13-ը վերահասցեագրվել է այլ մարմիններից:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում մուտքագրված գրավոր հարցումների գրեթե 90 տոկոսին պատասխանվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի 1-ին կետով սահմանված՝ 5-օրյա ժամկետում:

Մնացած դեպքերում, ելնելով լրացուցիչ ուսումնասիրություններ և աշխատանքներ կատարելու

անհրաժեշտությունից, հարցումներին պատասխանվել է մինչև 30-օրյա ժամկետում, ինչի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվել է դիմողներին:

Կից ներկայացնում ենք նաև պահանջվող տեղեկատվությունն աղյուսակի տեսքով.

| Տարեթիվ | Տեղեկատվության հարցում (թիվ) | Էլեկտրոնային եղանակով | Լրագրող | Բավարար/մերժում | Վերահասցեա-գրված |
|---|---|---|---|---|---|
| **2018** | **173** | **79** | **43** | **166/7** | **2** |
| **2019** | **288** | **277** | **56** | **280/8** | **3** |

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 21/01/2020 17:08:21 GMT+4

Signed by: HARUTYUNYAN VAZGEN 3703770104

ՎԱԶԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Աշխեն Դոյդոյան
Հեռ. 011-800-325